Արձանագրություն N 3
«ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան «11» «փետրվարի» 2019թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մարտիրոսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Մեժլումյանը
Կ. Համբարձումյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Գաբրիելյանը

Ի. ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին
(Հ. Մարտիրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ն 04.02.2019թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու մասին:
- 04.02.2019թ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում՝ եթե ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման մասին եզրակացությունը սահմանված ժամկետներում տրամադրվել է:
- Մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) և հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվել է հրավերով սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կողմից 08.02.2019թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
- «Սմարթլայն» ՍՊԸ-ի՝ հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում արձանագրվել է, որ «ապրանքային նշան» դաշտում լրացված է 2 տարբեր ապրանքային նշանի ապրանք և տեխնիկական բնութագրում սպիտակությունը սահմանված է ոչ հստակ:

Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշման 47-րդ կետը՝ կասեցնել փաստաթղթերի գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով՝ հնարավորություն տալով «Սմարթլայն» ՍՊԸ-ին ուղղել նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
(Հ. Մարտիրոսյան)

Հանձնաժողովը որոշեց.

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 13.02.2019թ. ժամը 14:00-ին ՀՀ կենտրոնական զինվորական դատախազության շենքում, հասցեն՝ ք. Երևան, Սունդուկյան 66ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Մարտիրոսյան

Անդամներ՝ _____ Մ. Մեժլումյան

_____ Կ. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա.Գաբրիելյան

Արձանագրություն N 4
«ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան «13» «փետրվարի» 2019թ.

ժ 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մարտիրոսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Մեժլումյանը
Կ. Համբարձումյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Գաբրիելյանը

Ի. ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրում առկա անհամապատասխանությունները շտկելու մասին

(Հ. Մարտիրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Սմարթլայն»ՍՊԸ-ն, 11.02.2019թ. ծանուցվել է հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում առկա անհամապատասխանությունները շտկելու մասին:
- Մասնակցի կողմից հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում առկա անհամապատասխանությունները շտկվել են սահմանված ժամկետում:
- Հանձնաժողովի կողմից Մասնակցի՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ գնահատվել են բավարար:

2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Հ. Մարտիրոսյան)

Հանձնաժողովը որոշեց.

- Ընտրված մասնակից ճանաչել 1-ին չափաբաժնով՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ին.

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը
- ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Մարտիրոսյան

Անդամներ՝ _____ Մ. Մեժլումյան

_____ Կ. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա.Գաբրիելյան